ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«15» դեկտեմբերի 2016 թվականի № 126-Ա

<<ԳԵՈՊՐՈՄԱՅՆԻՆԳ ԳՈԼԴ>> ՍՊԸ-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով <<ԳեոՊրոՄայնինգ Գոլդ>> ՍՊԸ-ի (այսուհետ՝ ընկերություն) վարչական բողոքը և համադրելով դրանք ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության (այսուհետ՝ տեսչություն) 26.09.2016թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի <<ԳեոՊրոՄայնինգ Գոլդ>> ՍՊԸ-ում ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության կողմից ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 04.08.2016թ. թիվ 000002 հանձնարարագրի հիման վրա իրականացված ստուգման 900002 ակտի հետ, հաշվի առնելով ստուգման ակտի դեմ բերված <<ԳեոՊրոՄայնինգ Գոլդ>> ՍՊԸ-ի առարկությունները՝ պարզվել է, որ ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջները, 20.10.2012թ. թիվ ՊՎ-189 պայմանագրով ամրագրված պայմանագրային պարտավորությունները, մասնավորապես՝

1. ստուգման ակտի 2-րդ կետում տեսչության կողմից արձանագրված՝ <<Հանքավայրում իրականացված հանքաքարի արդյունահանման ընթացքում հանքաքարում պարունակված օգտակար հանածոյի բաղադրամասերի որակի ճշտման նպատակով ընկերության կողմից նմուշարկման աշխատանքների չիրականացումը>> մասով ընկերության կողմից խախտվել է ընդերքօգտագործման թիվ ՊՎ-189 պայմանագրի 3.4.9 կետը, որը բխում է ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջից:

2. Ստուգման ակտի 3-րդ կետում տեսչության կողմից արձանագրված՝ <<Հորիզոններում եզրագծված բլոկներից փաստացի արդյունահանված հանքաքարերի տեղամասերը չեն ենթարկվում մարկշեյդերական չափագրման, որի արդյունքում հնարավոր չէ պարզել իրական արդյունահանված հանքաքարի քանակը տվյալ բլոկում, ինչպես նաև փաստացի աղքատացման և կորստի ցուցանիշները>> մասով խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասին 1-ին, 5-րդ կետերը, ընդերքօգտագործման թիվ ՊՎ-189 պայմանագրի 3.4.5 կետը, առավել ևս, որ ընկերությունն իր առարկություններում ընդունել է խախտումը, նշելով, որ<<փաստացի արդյունահանված հանքաքարի տեղամասերը առանձին վերցված ոչ միշտ են ենթարկվում մարկշեյդերական չափագրման>>:

3. Ստուգման ակտի 6-րդ կետում՝ <<Ընկերությունը լիազոր մարմնին ներկայացրած հաշվետվությունների համաձայն /5-ՕՀՊՀ, 70ՏԱ/ ստուգմամբ ընդգրվող ժամանակահատվածում հանքավայրի հաշվեկշռային պաշարներից մարել է 1019511 տ հանքաքար-ոսկի 4064,46 կգ, իսկ համաձայն պաշարների ամենօրյա շարժի գրանցամատյանի՝ հանքաքար 1015139տ - ոսկի 4017.95 կգ /տարբերությունը հանքաքար 4372տ – ոսկի՝ 46.51 կգ/: Սակայն ուսումնասիրելով ստուգման ընթացքում ստուգող հանձնախմբին ներկայացված փաստաթղթերը /ըստ հորիզոնների նմուշարկման պլաններ, նմուշների լաբորատոր անալիզների տվյալներ, ըստ հորիզոնների բլոկներով հաշվարկված հանքաքարի քանակների և հանքաքարում ոսկու միջին պարունակությունների հաշվարկման աղյուսակներ, մարկշեյդերական չափագրման տվյալներ և այլն/>> տեսչության կողմից արձանագրվածի մասով ընկերությունը առարկություններ չի ներկայացրել:

4. Ստուգման ակտի 6-րդ կետի <ա> ենթակետում տեսչության կողմից արձանագրված՝ <<հանքավայրի հաշվեկշռային պաշարների մարմանը մասնակցած մի շարք նմուշներում ոսկու պարունակությունները չեն համապատասխանում լաբորատոր անալիզների իրական պարունակություններին, որի արդյունքում բլոկով հաշվարկված հանքաքարում ոսկու քանակը քիչ է հաշվարկվել, որն էլ իր հերթին բերել է հաշվեկշռային պաշարներից ոսկու քանակի մարման ցուցանիշի էական նվազմանը>> խախտումը ընկերությունն ընդունել է, առարկություններում նշելով, որ կատարել են համապատասխան ուղղումներ:

5. Ստուգման ակտի 6-րդ կետի <<բ>> ենթակետում տեսչության կողմից արձանագրված՝ <<Մի շարք բլոկներով հաշվարկված հանքաքարում ոսկու միջին պարունակությունների հաշվարկմանը մասնակցած որոշ նմուշներում ոսկու բարձր պարունակությունները ընկերության մասնագետների կողմից դիտարկվել են որպես <<մրրկային>> պարունակություն ունեցող նմուշներ, որոնց հարթեցման համար որոշ դեպքերում կիրառել են

տվյալ հանքավայրի համար չընդունված մեթոդ, իսկ մնացած դեպքերում ընդհանրապես չկիրառելով որևէ մեթոդ արհեստականորեն նվազվել են նմուշում ոսկու պարունակությունները, որի արդյունքում էականորեն նվազեցվել է տվյալ բլոկներով հաշվարկված հանքաքարում մետաղի քանակները>> խախտման վերաբերյալ ընկերությունը բերել է հետևյալ առարկությունները. <<մարված պաշարների հաշվարկի ժամանակ մրրկային պարունակությունների հայտնաբերման և հարթեցման համար կիրառվել է Ի. Դ. Կոգանի առաջարկած մեթոդը, որը հաջողությամբ կիրառվել է դեռևս 1980 հանքավայրի պաշարների ընդհանուր հաշվարկում և ավելացրել, որ մրրկային պարունակությունների հայտնաբերման և հարթեցման տվյալ հանքավայրի համար ընդունված կամ չընդունված մեթոդ չի կարող լինել և գոյություն ունեցող տասնյակ մեթոդներից որևէ մեկի ընտրությունը կատարում է հաշվարկի հեղինակը որոշակի հիմնավորմամբ: Մեր կողմից կատարված հաշվարկում մի քանի բլոկներում կան թերի և վիճելի հարթեցման դեպքեր, որոնք ուղղվել են>>:

Առարկությունում նշված **մեթոդի ընտրության հիմնավորման** բացակայությունը արդեն իսկ առարկության չընդունման հիմք է հանդիսանում տեսչության համար, առավել ևս, որ ընտրված մեթոդով կատարվել է ոչ ճիշտ հաշվարկ: Տեսչության կողմից կատարված ստուգում անցկացնելու մասին թիվ 000002 հանձնարարագրով, նպատակ է հետապնդվում ապահովելու նաև՝ օգտակար հանածոյի պաշարների շարժի հավաստի հաշվառումը: Այն կարող էր իրականացվել ընկերության կողմից պաշարների հաստատման ժամանակ կիրառված և ներկայումս տարեկան մարվող պաշարների հաշվարկման ժամանակ ընկերության կողմից նույն մեթոդի կիրառման դեպքում: Հաշվի առնելով մոտեցման վերաբերյալ նաև 13.12.2016թ. կայացած վարչական բողոքի լսումների ժամանակ ընկերության ներկայացուցչի հավաստումն այն մասին, որ իրենք պաշարների հաշվարկը, ակտի ներկայացումից հետո կատարել են երկու մեթոդներով և հաշվարկների ժամանակ առկա են եղել շեղումներ, հետևում է, որ պաշարների շարժի հաշվարկման համար նախընտրելի է հաշվարկի նույն այն մեթոդի կիրառումը, որով հաշվարկվել են պաշարները, տվյալ դեպքում հիստոգրամների մեթոդով հաշվարկի կիրառումը:

6. Ստուգման ակտի 6-րդ կետի <գ, դ> ենթակետերի վերաբերյալ ընկերության կողմից ներկայացված առարկությունների չնդունումը արդյունք է՝ վերջինիս վերաբերյալ ընկերության կողմից ապացույց հանդիսացող փաստական հանգամանքների չներկայացման:

Ելնելով վերը շարադրվածից, հաշվի առնելով ստուգման ակտի նախագծի 1,4,5 կետերի վերաբերյալ ընկերության կողմից առարկությունների բացակայությունը, վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի 22.11.2016թ. և 13.12.2016թ.

արձանագրությունները հիմնավորված չէ <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> ՀՀ օրենքի վրա կատարված հղումներով ներկայացված վարչական բողոքը:

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 5-րդ, 9-րդ կետերով և 5-րդ մասով, 65-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և <<Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին>> ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Մերժել <<<ԳեոՊրոՄայնինգ Գոլդ>> ՍՊԸ-ի 2016 թվականի նոյեմբերի 11-ի <<ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ընդերքի պետական տեսչության 26.09.2016թ. թիվ 900002 ակտն անվավեր ճանաչելու /վերացնելու/ վերաբերյալ>> վարչական բողոքը:
2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ օրենքով սահմանված ժամկետում:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ